ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները

2018 թվականին ուժի մեջ մտած օրենսդրական բարեփոխումներով մեկնարկել է էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ազատականացման և շուկայի նոր մոդելին անցման գործընթացը: Նշված բարեփոխումների արդյունքում ներկայումս սպառվող էլեկտրաէներգիայի շուրջ 30 տոկոսի առևտուրն իրականացվում է շուկայի մրցակցային հատվածում: Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացումը Հայաստանի բոլոր սպառողներին, այդ թվում՝ բնակիչներին հասանելի դարձնելու համար դեռևս ծավալուն բարեփոխումների անհրաժեշտություն կա, որոնց թվին է դասվում նաև շուկայի մրցակցային հատվածում էլեկտրաէներգիա վաճառողների, հետևաբար նաև վաճառվող էլեկտրաէներգիայի ծավալների ավելացմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

Ներկայումս գործող «Էներգետիկայի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1.2-րդ մասի համաձայն՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիայի շրջանակում փոքր հիդրոէլեկտրակայանների դեպքում տասնհինգ տարվա ընթացքում, իսկ էներգիայի վերականգնվող այլ ռեսուրսների կիրառմամբ էլեկտրակայանների դեպքում քսան տարվա ընթացքում տվյալ կայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան ենթակա է գնման (օրենքով սահմանված՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիք): Օրենքով սահմանված՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից օգտվելու դեպքում լիցենզավորված անձն իրավունք չունի հետագայում հրաժարվելու դրանից:

Նշված իրավանորմը գործնականում ենթադրում է, որ հիշյալ կայաններում արտադրված ողջ էլեկտրաէներգիան պարտադիր կերպով երկարաժամկետ պայմանագրերով գնվում է երաշխավորված մատակարարի կողմից հանձնաժողովի

սահմանած գնով, ինչով պայմանավորված նշված արտադրողները չունեն հնարավորություն իրենց արտադրած էլեկտրաէներգիան ազատորեն վաճառելու շուկայի մրցակցային հատվածում:

Բացի այդ, շուկայի ազատականացման արդյունքում սպառողների համար ստեղծվել է հնարավորություն մինչ այդ գործող միակ մատակարարի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փոխարեն ընտրելու նաև այլ՝ մրցակցային մատակարարների: Միաժամանակ, սպառողներին (բացառությամբ բնակչության) իրավունք է վերապահվել, օրենսդրությամբ ամրագրված չափանիշներին համապատասխանելու դեպքում, ստանալով որակավորված սպառողի կարգավիճակ, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում ինքնուրույն մասնակցել առևտրին:

Ներկայումս էլեկտրաէներգետիկական շուկային մասնակցության նպատակով լիցենզիա են ստացել շուրջ 22 մատակարարներ, որոնցից, սակայն, շուկայում փաստացի գործունեություն են ծավալում միայն վեցը: Նշվածից կարելի է եզրակացնել, որ, չնայած շուկայի նկատմամբ ունեցած հետաքրքրությանը, այդ լիցենզավորված անձինք գործունեություն ծավալելու բարդությունների և սահմանափակումների, կամ այլ խոչընդոտների են բախվում: Հարկ է նաև նշել, որ շուկայում գործող վեց մատակարարներից իրենց առևտրի ծավալներով առաջինից երրորդ տեղերում գտնվող ընկերությունների առևտրի ծավալները տարբերվում են ավելի քան հինգ անգամ: Ընդ որում, առկա տեղեկությունների համաձայն, նշված մատակարարներից առաջինը ներկայումս գործող երաշխավորված մատակարարի/բաշխողի («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ) հետ միասին հանդիսանում է փոխկապակցված իրավաբանական անձ: Մյուս երեք մատակարարների առևտրի ծավալները շատ փոքր են առաջին երեքի համեմատ: Շուկայի զարգացման խնդիրներին և առկա իրավիճակին անդրադարձել է նաև Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն իր կողմից 2023 թվականին

էլեկտրաէներգետիկայի ոլորտում իրականացված ուսումնասիրության հաշվետվության[1] մեջ: Հանձնաժողովն առաջարկել է քննարկել որոշակի սպառողների համար որակավորված սպառողի պարտադիր կարգավիճակ սահմանելու հարցը: Այս մոտեցման կիրառման արդյունքում առավել խոշոր սպառողները կհանդիսանան շուկայի ուղիղ մասնակիցներ, իսկ մատակարարների միջև մրցակցությունը կբարելավվի:

Առաջարկվող կարգավորումները և ակնկալվող արդյունքը

«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է.

- օրենքով սահմանված՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից օգտվող՝ բնական ջրահոսի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններում, արևային և հողմային կայաններում էլեկտրաէներգիա արտադրողներին հնարավորություն տալ առաջիկա երկու տարիների ընթացքում հրաժարվել էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից և մուտք գործել մրցակցային շուկա՝ առանց այդ երաշխիքի վերականգնման իրավունքի:

Նշված իրավակարգավորումը հնարավորություն կտա ընդլայնելու էլեկտրաէներգետիկական շուկայի մրցակցային հատվածում էլեկտրաէներգիա վաճառողների շրջանակը և վաճառվող էլեկտրաէներգիայի ծավալները՝ այդ կերպ խթանելով ազատական շուկայի զարգացումը,

- սահմանել էլեկտրաէներգետիկական շուկայում որակավորված սպառողի կարգավիճակով ինքնուրույն՝ առանց մատակարար ընտրելու հնարավորության, առևտուր իրականացնելու պահանջ այն սպառողների համար, որոնք նախորդ օրացուցային տարվա ընթացում իրենց՝ 6 (10) կՎ ու բարձր լարման և մեկ միլիոն կՎտժ-ը գերազանցող էլեկտրական էներգիայի սպառում ունեցած բոլոր հաշվառման կետերում միասին սպառել են 12 միլիոն կՎտժ-ից ավելի էլեկտրական էներգիա: Որակավորված սպառողի

[1] https://competition.am/wp-content/uploads/2024/01/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84_%D4%B7%D5%AC%D5%A5%D5%AF%D5%BF%D6%80%D5%A1%D5%A7%D5%B6%D5%A5%D6%80%D5%A3%D5%A5%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1.pdf

կարգավիճակ չստանալու դեպքում այդ սպառողների համար առաջարկվում է սահմանել սպառված էլեկտրաէներգիայի համար ամենաբարձր սակագինը:

Որակավորված սպառողի պարտադիր կարգավիճակ ստանալու համար առաջարկվող սպառման շեմն (12 միլիոն կՎտժ) ընտրվել է՝ հաշվի առնելով մեծածախ շուկայում ուղիղ մասնակցելու արդյունքում սպառողի հնարավոր լրացուցիչ ծախսերը (նոր անձնակամի ներգրավում, առևտրին մասնակցնելու համար երաշխիքների տրամադրում կամ նման ծառայությունների ձեռբերում) և օգուտները (մատակարարների շուկայական մարժայի նվազեցում կամ այլ):

Նշված իրավակարգավորումը ևս հնարավորություն կտա խթանելու էլետրաէներգետիկական շուկայում մրցակցությունը և ընդլայնելու դրա մրցակցային հատվածում առևտրի մասնակիցների շրջանակը.

- էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում առավել արդյունավետ գործելու նպատակով ամրագրել որակավորված սպառողների իրավունքը՝ այդ շուկայում էլեկտրական էներգիա գնել և ներկրել նաև այլ որակավորված սպառողի համար.
- իրավական որոշակիության ապահովման նպատակով հստակեցնել հանձնաժողովի իրավասությունը՝ շուկայի կանոններով նախատեսելու էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի մրցակցային հատված կամ մեծածախ շուկա սպառողների պարտադիր մուտքի պահանջները, պայմաններն ու ժամկետները: Ներկայումս հիշյալ իրավակարգավորումն ամրագրված է ոչ թե շուկայի կանոնների բովանդակությանը, այլ որակավորված սպառողներին վերաբերող հոդվածում և ընդհանրական ձևակերպմամբ.
- տարակերպ մեկնաբանություններից խուսափելու նպատակով խմբագրական փոփոխություններ կատարել նաև օրենքի 39.4-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերում՝ հաշվի առնելով, որ «Էներգետիկայի մասին» օրենքի տրամաբանությամբ համապատասխան պահանջներ սահմանվում են ոչ միայն հիշյալ օրենքով, այլ նաև դրանով նախատեսված այլ իրավական ակտերով:

Նախագիծը մշակողը

Նախագիծը մշակվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագրի հետ համագործակցությամբ: